ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

18 նոյեմբերի 2016 թվականի N 177-Ա

Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Մ. Պետրոսյանի* անձնական դիմումը՝ **կարգադրում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն ***Մարինե Պետրոսյանին*** տրամադրել 2016 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ տաս աշխատանքային օր՝ 2016 թվականի դեկտեմբերի 19-ից մինչև դեկտեմբերի 30-ը ներառյալ:

2. ***Մարինե Պետրոսյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր՝ ***Գայանե Գրիգորյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բուժքույր՝ ***Գայանե Գրիգորյանին*** և <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության տնօրեն՝ ***Ռոբերտ Սահակյանին*** ապահովել <<Քաղսիի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ <<Հրազդանի բժշկական կենտրոն>> փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Սուսաննա Սիմոնյան)* կողմից:

4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

2016 թվականի նոյեմբերի 18
ք. Հրազդան